ՀԱԿՈԲ ՍՈՒՐԱԴՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԻ ԿԱՂԶՎԱՆ ԳԱՎԱՌՈՒՄ
(17-րդ դար -19-րդ դարի առաջին երեսնամյակ)

16-րդ դարի առաջին կեսին Արևմտյան Հայաստանի վերջնական նվաճման հետ մեկտեղ, օսմանյան թուրքերը ծեռնամուխ եղան նոր վարչակարգերի ներդրմանը: Տերության տարածքը տրոհվեց վարչատարածքային մեծ ու փոքր միավորների: Դրանցից խոշորագույնները կոչվում էին էյալեթներ (հետագայում՝ վիլայեթներ, հայկական աղբյուներում՝ նահանգ): Նահանգները տրոհվում էին սանջակների (գավառ), կազաների (գավառակ) ու նահիեների (գյուղախումբ): 16-րդ դ. Արևմտյան Հայաստանում ձևավորված էյալեթներն էին էրզրումը (Կարին), Վանը, Չլդրը (Ախալցխա), Կարսը, Դիարբեքիրը և Սեբաստիան: Կարսի նահանգը, որն ընդգրկում էր երբեմնի Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Վանանդ, Շիրակ (արևմտյան հատվածը), Արշարունիք, Գաբեղյանք գավառները, հյուսիսից սահմանակից էր Ախալցխայի, արևմուտքից՝ էրզրումի նահանգներին, հարավից՝ Բայազետի լիվա-փաշայությանը, արևելքից՝ պարսկահպատակ Արևելյան Շիրակին: Այն ձևավորվել է 16-րդ դ. վերջին քառորդին և 16-18-րդ դարերի ընթացքում ունեցել է 5-12 գավառ: 19-րդ դարի սկզբին բաժանվել է 6 գավառի՝ Կարս կամ Թախտին, Կեչվան, Շորագյալ, Զարիշատ, Կաղզվան և Խոջվան:[1] Վերջին գավառը, որ զբաղեցրել է խիստ սահմանափակ տարածք (ըստ Ինճիճյանի՝ նշանավոր Ղոշավանք-Հոռոմոսի շրջակայքը), դարի առաջին քառորդի ընթացքում վերացվել է և միացվել Շորագյալին: Ուստի, ռուսական

[1] Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 119:

պաշտոնական աղբյուրներում 1828-1829 թթ. պատերազմի նախօրյակին հանդիպում ենք միայն 5 գավառի:[2]

Կաղզվանի գավառը, որը համապատասխանում էր պատմական Այրարատ աշխարհի Գաբեղյանք գավառի մի մասին և Արշարունիքին /Երասխածոր/ և այժմ զբաղեցնում էր նահանգի հարավային հատվածը, հիշվում էր դեռ 16-րդ դարի վերջից: Գտնվում էր նույն փաշայության Կեչվան ու Շորագյալ, Էրզրումի նահանգի Ստորին Բասեն ու Ալաշկերտ և Երևանի խանության Սուրմալու գավառների միջև: Վերջինիս հետ հարավ- արևելյան մասում անջրպետ էին Սև (Կարադաղի) լեռները, որին զուգահեռ հոսում է Արաքսը, իսկ Սուրմալուի հյուսիս-արևմտյան մասի հետ՝ Հայկական պարն է, որի երկայնքով հոսում էր Զաղարան գետը: Բասենից բաժանվում էր Սողանլուղի լեռներով և նրա շարունակությունը հանդիսացող լեռնաբազուկներով: Շորագյալի գավառից Կաղզվանը տրոհվում էր սահմանակից ջրբաժան լեռնաբազուկներով: Կաղզվանը Բայազետի լիվա-փաշայության Ալաշկերտ գավառից սահմանազատվում էր Հայկական պար լեռնահամակարգի մեջ մտնող Շատին /Չատին/, Շախյոլ, Բոզ-դաղ, սրանից արևելք՝ Հինքո, վերջինից հյուսիս՝ Ընկուզուտ, հարավ-արևելք՝ «խրթնատեսիլն Մամաքար» լեռներով:[3] Կաղզվանի գավառի ծայր հարավ-արևմտյան մասում, Արաքսի ձախ ափին բլուրներով շրջապատված Տաղնի[4], Չանկլի, Զոնտար լճերն էին:

Գավառի կենտրոնատեղին ու սանջակբեյի նստավայրը Բարդող լեռան ստորոտին ընկած Կաղզվան գյուղաքաղաքն էր:[5] Այն 17-րդ դարում ուներ 700

---

[2] История военных действии в Азиатской Турции в 1828-1829гг., СПб. 1836, ч.1, с.75:

[3] Абих Г. Геология Армянского нагорья, Западная часть. Орографическое и геологическое описания. Пятигорск, 1889. с. 55, Ալիշան Ղ., Այրարատ, էջ 49:

[4] Տաղնին հայտնի է նաև Դագնիս ձևով (Карта театра военных действий в 1855г. Малой Азии, (в атласе "Война за Кавказом в 1855„ Н.Н. Муравьева. СПб 1877/:

[5] Մատենադարան, Զանազան հեղինակների արխիվ, թղթ. 41, վավ.1, թղթ. 42, վավ.2, թղթ.43, վավ. 3:

տուն բնակիչ:[6] Ղ. Ինճիճյանը 19-րդ դարի սկզբին Կաղզվանում հաշվում է 500 մարդ՝ «մեծի մասին յազգէս հայոց»:[7]: 1828 թ. դեկտեմբերի 24-ի վիճակով՝ այնտեղ մնացել էր մինչև 300 բնակիչ[8]: Գավառի վիճակը քիչ բանով էր տարբերվում կենտրոնավայրից: Հստակորեն երևում է, որ օսմանյան տիրապետության ընթացքում կոտորածների, բռնագաղթի ու ազգաձուլման պայմաններում հայ բնակչության թիվը շեշտակիորեն պակասել էր: Արծվուտ լեռան սահմաններում կային բազում լքված և ամայի գյուղեր, որոնք ևս, հավանաբար 17-րդ դարից սկսյալ՝ հայաթափվել էին կամ ամայացել:

Մինչև 1828թ. Կաղզվանի գավառում կար 16 գյուղ՝ բաղկացած 776 տնից: Կարսի փաշայության նվաճումից հետո ռուսական իշխանությունների կատարած մարդահամարի տվյալներով, գավառում հայկական 262 տան դիմաց մահմեդականներն ունեին 514 տուն: Ընդհանուր բնակչությունը կազմում էր 3995 մարդ:[9] Յուրաքանչյուր գյուղում փաստորեն հաշվվում էր մոտավորապես 50 տուն:

Գավառի առավել նշանավոր հայկական գյուղերից էր Չանկլին: 19-րդ դարի սկզբին այն անցել էր Ալաշկերտի փաշային[10]: Գերմանացի ճանապարհորդ Կ. Կոխը, 1843թ. լինելով այս գյուղում, ենթադրում է, որ այնտեղի «բնակիչների մեծ մասը պետք է, որ մահմեդականներ լինեին...»[11]: Սակայն այդ հարցում Կոխը սխալվում էր. այս գյուղը մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակին էլ դեռ շարունակում էր մնալ որպես զուտ հայաբնակ գյուղ: Արաքսի աջ ափին Ղարավանք (Ղաչավանք, Սև վանք) հայաբնակ գյուղն էր՝ Թաթլո և Վարոսի (Վարդիհեր) վանքի հարևանությամբ: Այն Ղարավանք անունը ստացել էր եկեղեցիների սև քարից կառուցված լինելու

---

[6] Էվլիա Չելեբի. Թուրքական աղբյուրներ, թարգմանությունը, առաջաբանը, ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի, հ.գ, Ե. , 1967, էջ 119:
[7] Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 120:
[8] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ 58, վավ. 103, թ.1-2, թղթ. 66, վավ. 60, թ.1:
[9] История военных действий ч.1, СПб., 1836, с. 75:
[10] Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 120:
[11] K. Koch, Wanderugen im Oriente während der Jahre 1843 und 1844: Reise im pontischen Gebirge und Türkisch-Armenien, Weimar; 1846, p. 453:

պատճառով Սարգիս Հայկունին Ալաշկերտից Կաղզվան տանող ճանապարհին՝ մինչև Ղարավանք հասնելը, հիշատակում է ևս երկու հայաբնակ գյուղ՝ Չինամեշը և սրանից հյուսիս՝ Ինկլիջեն[12]:

Կաղզվան քաղաքից հարավ Ղզլքիլիսան ու Մանավասն էին: Ղ. Ալիշանը վերջինիս կապակցությամբ գրում է. « որ տայ յիշեցուցանել զգացումն նահապետութեան Որդունեաց և Մանավազեանց»[13]: Գավառի կենտրոնավայրից մոտ 13-կմ հյուսիս-արևելք ընկած էին դեռևս 6-րդ դարից հիշատակվող Խար[14], իսկ նրանից հարավ՝ Ղարաբաղ գյուղերը: Սրանից հարավ-արևելք, Ինջե լճակից արևմուտք ձգվող լեռների խորշում, Քերս կամ Գերս գյուղն էր, որի դիրքը և անունը՝ Գերս-Արտագերս, հուշում էր այս տարածքում միջնադրյան անառիկ Արտագերս ամրոցի գոյությունը: Սրա մերձակայքում պետք է գտնվեր Ջունուքը[15]:

1829թ. հոկտեմբերի 29-ին կոմս Ի. Պասկևիչի հրամանով Քերսի գյուղացիների մի մասին գրանցում են Շորագյալի գավառի կառավարիչ Մարտիրոս Վեքիլյանի կազմած «Դավթարում»՝ որպես ռուսական զորքի հետ Արևելյան Հայաստան գաղթելու ենթակաների ու ռուսաց հպատակների: «Բայց, այսուհետև, քանի որ մեք թագավորական դեֆտերն գրուածենք, այն թէրիշէն մինչև հիմայ սանի բեկն մեզի հետ ներհակութիւն կանե... խաչահաւադ էնք... և մանաւանդ ահ և երկիւղ կուտայ մեզ թե համբերեցեք տեսէք թէ յետ քանի մի աւուր ես ձեր գլուխն ինչ կուբերեմ... մեզ մէկ իլլաճ արա մեք այս թուրքի ձեռն չեմք կարալ քաշեր, մեզ շօրագեալու վերայ գրէ... դու գիտես մեք էլ քրիստոնեա եմք, մեր հաւատն խաչն եկեղեցին, և օրենքն ձերն է... այս թուր(ք) մեզ վառել է »:[16] Կաղզվանի Խար, Ղարաբաղ և երկու ուրիշ գյուղեր, վախենալով Սանի բեկից, չեն գրվում «սանջաղի ցուցակներում»:[17]

---

[12] Հայկունի Ս. նշվ.աշխ. էջ 335:

[13] Ալիշան Ղ., Այրարատ, էջ 54:

[14] Խար բառը Կյուրեղ Սրապյանն այսպես է ստուգաբանում «Խար՝ հայէրեն բառ մի է և կնշանակե տաղ կամ տաղած, բայց կարելի է Քար բառին աղաւաղեալն լինի» (Մատենադարան,Կյուրեղ Սրապյանի արխիվ, թղթ. 81բ, վավ. 222, թ.1):

[15] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 257գ, վավ. 66, թ.1:

[16] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ.257գ, վավ.84:

[17] Նույն տեղում, վավ.92:

17-րդ դարում հիշատակվում է նաև Աղջաղալա անունով մի գյուղ, որը հիմնվել է Երվանդակերտի տեղում: Ջալալիների բռնություններից վախեցած այս գյուղի բնակիչները , ըստ Առաքել Դավրիժեցու, փախուստի են դիմումում:[18] Այս գյուղը նվաճվում է Երևանի կուսակալ Ամիրգունա խանի կողմից. «պատերազմամբ և աւերածով շրջակայիցն վայրաց և վարելով զհայ»:[19]

Ախուրյանի և Արաքսի խառնման վայրից հյուսիս, Ախուրյանի աջ ափին Հելիմջանն էր, ավելի հյուսիս՝ տարածվում էին բազամաթիվ ավերակ բնակատեղիներ. «երևին բազում աւերակք տանց և փոքրիկ ամրոցի միոյ և մատրան»[20]:

Գավառի ժողովրդագրական պատկերը մեծ փոփոխությունների է ենթարկվում դեռ 17-րդ դարի սկզբներից: Շահ Աբասն ըստ Առաքել Դավրիժեցու « զՁորն Կաղզուանու բնաւին» ամայացրեց՝ գաղթեցնելով դեպի Պարսկաստան:[21] 1665թ. մայիսին հինգ ֆրանսիացիներ, երզրումից Պարսկաստան անցնելու ճանապարհին, լինում են նաև Կաղզվանում: Նրանցից երկուսի՝ Դե Լալենի և Դե Լա Բուլե Լե Գուզի՝ ֆրանսիական թագավորին ուղղված մայիսի 20-ի նամակում, ի թիվս Հայաստանի տարբեր շրջանների, տրվում է Կազդվանի նկարագիրը: Հասան-Կալայից «...այն կողմ, մինչև պարսկական հողերը,-գրում են ֆրանսիացիները,- կարելի է հանդիպել միմիայն անապատների և մի փոքր ավելի մեծ քաղաքի, որը բնակեցված է հայերով: Դա Կաղզվանն է...: Այս երկիրն ամբողջովին ավերված է Շահ Աբասի կողմից, որը այրել ու անմարդաբնակ է դարձրել բոլոր գյուղերը՝ բնակիչներին իր երկիրը տեղափոխելու նպատակով, իսկ մնացած սակավաթիվ մարդիկ, ինչպես նաև բոլոր գաղթեցվածները քրիստոնյաներ են»:[22]

---

[18] Պատմությիւն Առաքել վարդապետի Դավրիժեցիոյ էջ 60:

[19] Ալիշան Ղ., Այրարատ, էջ 64:

[20] Շախաթունյան Հովհ., Ստագրութիւն կաթողիկե էջմիածնի և հինգ գավառաց Այրարատ ի էջմիածին 1842, էջ 39-40:

[21] Առաքել Դավրիժեցի, Պատմութիին Առաքել վարդապետի Դավրիժեցիոյ, Վաղարշապատ, 1884, էջ 38:

[22] Զուլալյան Մ.Կ.,Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա,Քաղաքական պատմություն, Երևան 1990, էջ 284:

Բռնագաղթի դեպքերը կրկնվում են հաջորդ դարում: Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ Թահմազղուլի խանը 1735 թ. գարնանը շարժվում է Կաղզվան և «զամենայն վայրսն գերեաց և աւերեաց»:[23] Նույնի մասին ականատես Աբրահամ Կրետացին պատմում է, որ պարսկական բանակը, պաշարելով Կարսը, Նադիրի հրամանով ուղարկվում է նաև Կաղզվան: «...Յորում գնացեալ քանդեցին զերկիրն,- գրում է պատմիչը,- այրեցին գշինուածսն, գերեցին զմարդիկք և զանասունս և բազում աւարաւ դարձան ի բուն բանակն ի Ղարս »:[24]

Կաղզվանի գավառը մեծապես տուժում է նաև 1820-1823թթ. թուրք-պարսկական պատերազմի ժամանակ: 1822 թ. աշնանը Երևանի Հասան խանի զորքերը ներխուժում են Երասխածոր և 2000 ծուխ հայերի բռնագաղթեցնում Արարատյան դաշտ, մասնավորապես՝ Սարդարապատ:[25] Այդ արշավանքի հետևանքով շատերը գավառից ինքնակամ հեռանում են Գյումրի: Նրանց ունեցվածքն անցնում է տեղի գավառապետ Սանի բեկի ձեռքը:[26]

Կաղզվանի բնակչությունը մեծ կորուստներ է կրում 1829թ. Բասենից ներխուժած քրդերի հաճախակի հարձակումների հետևանքով: Տեղի բնակչությանը հաջողվում է նրանց հասցնել հակահարված:[27] Այս գավառը նոր արհավիրքների է ենթարկվում 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում: Կարսից 1829թ. հունիսի 24-ին էջմիածնի միաբանությանն ուղղված նամակում Սահակ վարդապետ Սաթունյանը կաղզվանցիների ծանր վիճակի մասին հայտնում էր. «...մեր եղեալք հայոց աստ և անդ ցրվեցան և ոմանք ի սղնաղ մտին վասն երկիւղի քրթացու և օսմանցոյց վասն որոյ և մեք

---

[23] Զաքարիա Քանաքեռցի, Զաքարեայ սարկաւագի պատմութիւն, հ.Ա.,1870, ի տպ. Կաթողիկէ էջմիածնի ի Վաղարշապատ, էջ 71:

[24] Աբրահամ Կրետացի, Պատմություն,Ե.1973, էջ 67:

[25] Արարատ, 1889, թիվ Գ, էջ 152:

[26] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 257գ, վավ. 86:

[27] История военных действии в Азиатской Турции в 1828-1829гг., т.2, с. 65; Присоединение Восточной Армении к России, СБ. док., т.2, 1814-1830, Ер.,1978, док. 365:

անճար մնալով եկեալ աստ կամք...»:[28]

Եվ վերջապես, գավառն ու քաղաքը ամենալուրջ էթնոժողովրդագրական փոփոխությունների ենթարկվեց 1830թ., երբ ռուսական զինվորական իշխանություններն ու կամավորական Մարտիրոս Վեքիլյանի ջոկատը հայության զանգվածային գաղթ կազմակերպեցին դեպի Անդրկովկասի Ռուսաստանին անցած շրջաններ:[29] Պատահական չէ, որ այդուհետ Կաղզվանն արդեն ներկայանում էր որպես «շեն անշքացեալ ... և սակաւամարդ»:[30] Իսկ Ն.Սարգսյանն այսպես է ներկայացնում սակավամարդ ու կիսավեր դարձած Կաղզվանի վիճակը. «Արդ Կաղզուան թէպետ և աւան համարի ի գաւառի աստ, այլ ի հնոց և ի նորոց չունի ինչ արժանանալուրս, սակաւաթիւ տունքն ոչ ինչ ընդհատ ի գեղջկականց և շուկայն իբր քսան կրպակօք սահմանիւ նորաշէն եկեղեցին անշուք է և ազգայինք սակաւ, զի բազումք գաղթեցան առ Ռուսս»:[31]

Նման էթնիկ գործընթացները, որոնց հիմնական միտումը հայաթափումն ու ամայացումն էր, հատուկ էին ոչ միայն Կաղզվանին, այլև արևմտահայ գրեթե բոլոր գավառներին, երևույթ, որը կազմում էր Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական զարգացման հիմնական ուղղությունը օսմանյան դժնդակ տիրապետության ողջ ընթացքում:

---

[28] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 257, վ. 56: Նույնի մասին Ղ.Ալիշանը գրում է. «... այլ ասէին մերձաբնակքն յահէ Եգիտեաց դեգերելոց ի կողմնանսն» (Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 53):

[29] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 66, վավ.185, թ.1:

[30] Ալիշան Ղ. Տեղագիր Հայոց Մեծաց , Վենետիկ , Ս. Ղազար , 1853 , էջ 35:

[31] Սարգիսեան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս » Վենետիկ, 1864, էջ 216:Հարկ է նշել, որ հետագայում 1840թ. ընթացքում տեղի ունեցած երկրաշարժերի հետևանքով Կաղզվանը կրկին զրկվեց իր բնակիչների մի մասից (Տես Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.2, էջ 908): Սակայն նույնիսկ այդ ժամանակ, ինչպես հաստատում է Կաղզվան այցելած գերմանացի ճանապարհորդ Կ.Կոխը, քաղաքում հաշվում էր մոտ 100 հայկական տուն (K. Koch, Wanderugen im Oriente während der Jahre 1843 und 1844: Reise im pontischen Gebirge und Türkisch-Armenien, p.453-454: 19-րդ դարի կեսերին Կաղզվանի բնակչության թիվը աճեց և 1855թ. արդեն կազմում էր 800 տուն, որից հայկական էին միայն 150-ը: (ԾցՐՈՉՖպՉ ծ.ծ. "ԹՏռվՈ ջՈ ԽՈՉՍՈջՏՎ Չ 1855„ հկո 1877, Տ.1, ր. 59, 155):